

COVID-19

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն Մուտքի Ստուգում

Մուտքի ստուգումը COVID-19-ի տարածումը սահմանափակելուն օգնող ռազմավարություն է: Cal/OSHA-ն պահանջում է կատարել բոլոր աշխատակիցների մուտքի ստուգում: Այն պահանջվում է նաև Կալիֆորնիայի Հանրային Առողջության Վարչության (CDPH) կողմից առողջապահական հաստատությունների բոլոր այցելուների համար ([AFL 20-38.7](#)): Այս փաստաթուղթը հաստատություններին տրամադրում է լրացուցիչ ցուցումներ մուտքի ստուգումների վերաբերյալ: COVID-19-ի կանխարգելմանն ուղղված այլ լավագույն գործողությունների մասին խնդրում ենք տեղեկանալ [Բիզնեսների և Գործատուների Ուղեցույցից](#):

Համաձայն Cal/OSHA-ի [COVID-19 Կանխարգելման Արտակարգ Ժամանակավոր Չափանիշների](#) (ETS)՝ գործատուները պետք է մշակեն և իրականացնեն աշխատակիցների COVID-19-ի ախտանիշների ստուգման գործընթաց:

Մուտքի ստուգումների տարբերակները ներառում են՝

- Անձանց կողմից տանը սեփական ախտանիշների գնահատում՝ նախքան աշխատավայրին հայտնելը կամ ընդհանուր փոխադրամիջոց նստելը.
- Աշխատավայրի մուտքի մոտ ցուցանակի տեղադրում, որը նշում է, որ ախտանիշներ ունեցող և/կամ COVID-19-ի թեստի դրական արդյունք ունեցող անձինք չպետք է մուտք գործեն տարածք.
- Տեղում աշխատավայրում անձանց ստուգում¹:

Անձինք չպետք է մուտք գործեն աշխատավայր, եթե՝

- Ունեն ջերմություն կամ COVID-19-ի ախտանիշներ².
- Տվյալ պահին նրանցից պահանջվում է մեկուսանալ՝ համաձայն Առողջության Պատասխանատուի Մեկուսացման Հրամանի.
- Սերտ շփում ունեցած անձինք են, որոնցից պահանջվում է չգալ աշխատանքի՝ համաձայն [CAL-OSHA](#)-ի:

Ծանոթություն: Առողջապահական հաստատությունների մուտքի պահանջները կարող են լինել տարբեր: Հաստատությունները պետք է հետևեն Կալիֆորնիայի Հանրային Առողջության Վարչության (CDPH) Բոլոր Հաստատությունների Նամակներին (AFLs):

1 Cal-OSHA ETS-ի համաձայն, եթե աշխատավայրն ընտրում է գնումը տեղում անցկացնել, ներսում դիմակներ պետք է կրեն և՛ ստուգողը, և՛ աշխատակիցը: Եթե չափվում է մարմնի ջերմաստիճանը, պետք է օգտագործվեն անհպում մարմնին չդիպչող ջերմաչափեր: Նշում. մուտքի մոտ ջերմաստիճանի իրական չափում չի պահանջվում:

² COVID-19-ի ախտանիշները ներառում են ջերմություն կամ դող, հագ, շնչարգելություն կամ դժվարացած շնչառություն, համի/հոտի Նոր առաջացած կորուստ, մկանային կամ մարմնի ցավ, գլխացավ, կոկորդի ցավ, սրտխառնոց կամ փսխում, փորլուծություն, բթի փակվածություն կամ քթահոսություն կամ հոգնածության զգացողություն:

